# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2017թ. նոյեմբերի 6-8 Նիդերլանդների Թագավորություն (ք. Հաագա)**

**կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ**

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Թամազյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք. Հաագա, Նիդերլանդների Թագավորություն, 2017թ. նոյեմբերի 6-8

4. **Հրավիրող կողմը՝**

Նիդերլանդների ֆինանսների նախարարություն:

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն ֆինանսական կառավարման և հսկողության շուրջ բարձր մակարդակի կլոր սեղան ձևաչափով միջազգային համաժողովին

6. **Քննարկված թեմաները՝**

✓ ***Ինչպես թիրախավորել կառավարչական հաշվետվողականությունը.***

Նիդերլանդների ֆինանսների նախարարության ներկայացուցիչները հակիրճ ներկայացրեցին ֆինանսական կառավարման և հսկողության հոլանդական մոդելը: Քննարկման արդյունքում կարևորվեց կառավարչական հաշվետվողականությունը, որպես ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի անբաժանելի բաղադրիչ: Ներկայացվեց նաև Նիդերլանդների ֆինանսների նախարարության փորձը՝ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ուժեղացման գործում: Արդյունքում մասնակիցները պատկերացում կազմեցին հանրային հատվածի կազմակերպություններում ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման և գործունեության ընթացքում ֆինանսների նախարարության դերի և մասնակցության մասին:

✓ ***Կառավարչական հաշվետվողականությունը Մոլդովայում, Խորվաթիայում, Ռումինիայում և Մակեդոնիայում.***

Կազմակերպիչները, ժամանակի սղությամբ պայմանավորված, մասնակից թվով 9 երկրներից միայն 4-ին էին հնարավորություն ընձեռել ելույթով հանդես գալու և ներկայացնելու իրենց երկրում ֆինանսական կառավարման և հսկողականության համակարգի առկա վիճակը: Ներկայացման արդյունքում մասնակիցները հնարավորություն ստացան զուգահեռներ անցկացնել իրենց երկրներում տիրող իրավիճակի հետ: Քննարկումների արդյունքում անդրադարձ եղան այնպիսի հարցերի, որոնք առաջանում կամ կարող են առաջանալ արդյունավետ կառավարչական հաշվետվողականության համակարգի ներդրման և գործունեության ընթացքում:

✓ ***Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչների անդրադարձը ֆինանսական կառավարման և հսկողության համակարգին.***

Ելույթներով հանդես եկան Եվրոպական հանձնաժողովի բյուջետային վարչության, SIGMA ծրագրի ներկայացուցիչները, ինչպես նաև Մոլդովայի ֆինանսների նախարարի ԵՄ բարձրաստիճան խորհրդականը: Ելույթ ունեցողները ներկայացրեցին ֆինանսական կառավարման և հսկողականության սեփական պատկերացումները, ինչպես նաև անդրադարձ կատարեցին վերը նշված երկրների ներկայացումներին:

✓ ***Կառավարչական հաշվետվողականությունը մասնակից մյուս երկրներում.***

Քննարկումների արդյունքում մասնակից մյուս երկրներ ի ներկայացուցիչները նկարագրեցին ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտում իրենց երկրներում իրականացվող բարեփոխումները: Ելույթով հանդես են եկել Ուկրաինայի ֆինանսների նախարարի առաջին տեղակալը, Մակեդոնիայի ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարը և այլ պաշտոնյաներ:

Մասնակիցները ներկայացրել են իրենց երկրներում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու կիսվել փորձով, ինչպես նաև տեղեկացել են յուրաքանչյուր տարածաշրջանային ծրագրի հետագա գործընթացների մասին, որոնք ուղեկցվել են ակտիվ քննարկումներով:

Ներկայացվել է ՀՀ-ում ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքը, գործընթացների առկա իրավիճակը: Ներկայացված թեմաները բավական արդիական են և անհրաժեշտ է քայլեր իրականացնել՝ գնահատելու ՀՀ-ում կիրառման դեպքում դրանց պոտենցիալ օգտակարությունը և դրա արդյունքում որոշ պահանջներ ազգային օրենսդրության մեջ ամրագրելու մոտեցումը:

✓ ***Հանդիպումներ.***

Տեղի են ունեցել նաև երկկողմ հանդիպումներ Ուկրաինայի և Խորվաթիայի ներկայացուցիչների հետ:

Ուկրաինայի ներկայացուցիչների հետ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնելու համագործակցությունը այս ոլորտում՝ կազմակերպելով փոխադարձ այցելություններ և փորձի ներկայացում:

Խորվաթիայի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել կենտրոնական ներդաշնակեցման միավորների (ֆինանսների նախարարությունների) միջև փոխըմբռնման և փոխգործակցության հուշագիր ստորագրելու վերաբերյալ: Նշված հուշագրի ստորագրումը հնարավորություն կտա սերտորեն համագործակցել ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքում՝ բարձրացնելով բարեփոխումների արդյունավետ իրականացման հավանականությունը:

**7. Գործուղվողը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյան

**8. Ստորագրությունը, ամսաթիվը**

09.11.2017թ.